



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 4 ՄԱՅԻՍ, 2015

## ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈՐՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւնն Հօր Յիսուս, տուր ինձ իմաստութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 31

ՎՍՏԱՀՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՎՐԱՅ

Ո՛վ Տէր, քեզի ապաւինեցայ. թող անօթով չմնամ բնաւ:

Արդար ես դուն, ազատէ զիս:

Ականջդ ինձի խոնարհեցուր, եւ փութա՛, ազատէ զիս:

Ինձի պաշտպան, ապաստանարան եղիր,

իմ փրկութեանս ապաստանը:

Իմ ապաւենս եւ իմ անրոցս դուն ես.

դուն ինքդ զիս առաջնորդէ եւ պաշտպանէ,

որպէսզի քու անունդ փառաւորուի:

Ձիս դուրս բեր որոգայթէն, գաղտուկ ինձի դէմ լարուած,

որովհետեւ դուն ես իմ ապաստանս:

Քու ձեռքերուդ ես կը յանձնեմ իմ հոգիս,

ո՛վ Տէր, Աստուած ճշմարտութեան, դուն որ փրկեցիր զիս:

Դուն կ'ատես անոնք՝ որոնք սնոտի կուռքեր կը պաշտեն,

մինչ ես քեզի՝ Տիրոջ վստահած եմ:

Քու սիրովդ պիտի ցնծամ եւ ուրախանամ,

որովհետեւ թշուառութիւնս տեսար,

ճանչցար տառապանքներս, եւ զիս թշնամիին ձեռքը չմատնեցիր,

այլ՝ վտանգէն զիս դուրս բերիր եւ զիս ոտքի կանգնեցուցիր:

### ՇԱՐԱԿԱՆ- ԱՂՈՐՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:*

*Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:*

*Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցերոց արքայութիւն:*

*Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւեն ես նեղերոց:*

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

### ԱՂՈՐՔ

*Պահապան ամենայնի Քրիստոս,*

*աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,*

*ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,*

*ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.*

*եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

# ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ



ԵԼԻՑ ԻԳ (23) ԳԼՈՒԽ



Պատուիրանները կը շարունակուին: Այս գլուխը քանի մը կարճ բաժիններով կը ներկայացնէ հետեւեալները:

## ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ (23:1-9)

Կը պատուիրէ սուր յիսուիլ եւ սուր վկայութիւն չտալ, նաեւ աղքատին աջառութիւն չընել, անոր դասը չծռել, կաշառք ստանալով, կամ մեծէն ու հարուստէն վախճալով: Սուր լուրը ինքնին իրաւագր-կում է աղքատին հանդէպ:

4-5 համարները «սիրէ քու թշնամիդ» պատուիրանին թանձրական մէկ բացատրութիւնն է. սիրել նաեւ կը նշանակէ օգնել: Պատուիրան մը, որ յաճախ կը դժուարանանք հասկնալու եւ կատարելու:

8-9 համարներուն մէջ կը խօսի կաշառքի մասին, որ արդարութիւնը կը ծռէ եւ արդար մարդը կը շեղէ իր ճամբէն: Նաեւ, կը խօսի օտարականի մասին. օտարական կը նշանակէ պանդուխտ եւ Աստուած կը պահանջէ չիրաւագրել կամ չանտեսել զայն, որովհետեւ Աստուած ողորմութեան Աստուած է եւ երբայցիք որ պանդուխտներ էին Եգիպտոսին մէջ, Աստուած անոնց պանդէպ եղած անիրաւութիւն-ները փնտնելով եւ անոնց բողոքը լսելով, ազատեց զիրենք: Նոյնը պէտք էր ընէին նաեւ իրենք ուրիշ օտարականներու հանդէպ:

## ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ ԵՒ ՕՐ (23:10-13)

10-13 համարները դարձեալ աղքատներու կը վերաբերին, այս անգամ անոնց հանգիստը նկատի ունենալով եւ բարեգործութիւն թելադրելով Իր ժողովուրդին: Ինչպէս որ մարդը 6 օր պիտի աշխատի եւ 7-րդ օրը հանգիստ ընէ, նոյնպէս հողը պէտք է 6 փարի մշակել եւ 7-րդ փարին ձգել որ հողը հանգչի: Բայց հողին հանգիստ փալը ինքնանպատակ չէ, որովհետեւ բնութիւնը դադար չի ճանչնար: Հետեւաբար, 7-րդ փարին հողաբերը պէտք չէ աշխատի եւ հոգնի, եւ բնութեան փուստ բարիքները պէտք է որ աղքատները վայելեն, կամ կենդանիները նոյնիսկ: Հետեւաբար, պիտի նաեւ աղքատին մասին մտածել, հոգածու ըլլալ անոնց հանդէպ, չչարաշահել, չկեղեքել, ծանր բեռներ չդնել անոնց ուսերուն վրայ, այլ անոնց նայիլ իբր մարդ արարած եւ յարգել անոնց իրաւունքները:

13-րդ համարին մէջ կ'ըստ. «ուրիշ աստուածներու անուն մի յիշէք». քանանացիները ունէին բնութեան եւ բարեբերութեան աստուածները եւ երբ երբայցիք հոն հաստատուեցան, երբեմն շփոթի մտածուեցան, որովհետեւ փակաւին փեղայնական աստուածներու գաղափարը ունէին եւ կը կարծէին թէ պէտք էր նաեւ անոնց աստուածներուն դիմել՝ բարեբեր փարի մը ունենալու համար:

## ԵՐԵՔ ՄԵԾ ՏՕՆԵՐԸ (23:14-19)

14-17 համարներուն մէջ երեք հիմնական փոներու մասին կը խօսուի որոնցմէ առաջինին անունը ուղղակիօրէն յիշուած է Բաղարջակերաց փօնը -որ Զարկական փօնն է-, իսկ միւսները կը սահմանուին իրենց եղանակով, այսպէս՝ երկրորդ փօնը երախայրիքներ ընծայելու փօնն է որ նոյնինքն Պենտեկոստէն է, իսկ երրորդը՝ վերջին հունձքերը ժողովելու առիթով կատարուած փօնն է որ կը նոյնանայ Տաղաւարահարաց փօնին հետ:

Նոր Կրակարանի լոյսով կարելի է զայն պարզաճեցնել եկեղեցւոյ այս աշխարհի վրայ ամբողջական երեւոյթին հետ. իբր բոլոր ազգերէն Աստուծոյ ակնկալած պարտի մէկփեղումը: Եւ երկրորդ, կը նշանակէ այն հանգրուանը յաւիտենական կեանքին մէջ, երբ որ այդ հունձքը ամբողջապէս ժողովուէ, այլ խօսքով, Քրիստոսի երկրորդ գալուստը, երբ բոլոր ազգերէն հաւաքացեալներ պիտի յափշտակուին եւ իր հետ ըլլան յաւիտենականօրէն. ասիկա աշխարհէն հնձուած Տիրոջ հունձքն է:

Իսկ Տաղաւարահարաց փօնը աշնան փեղի ունեցող վերջին բերքերու ժողովումն ու ընծայումն էր Աստուծոյ: Կը նշանակէ թէ այդ եղանակին, երբ արդէն անձրեւները կը սկսէին եւ հողագործութիւնը կանգ կ'առնէր, ամէն մարդ իր փունը կը քաշուէր -իր փաղաւարը- եւ այդ առիթով վերջին ուրախու-թիւնը կ'ընեն՝ իրենց շնորհակալութիւնը յայտնելով Աստուծոյ:

18-19 համարներու մէջ ծիսական հարիւրանքներ կը փրփին այս փօներու վերաբերեալ. մէկը գոհի արեան վերաբերեալ, միւսը առաջին ընծաներու -երախայրիք: Հոս պէտք է գիտնալ որ ընծաներուն կ'ընկերանային իւրով շաղուած հաց եւ գինի: Հացի համար անխմոր ըլլալը կը պահանջուի -որովհետեւ թթխմորը ապականութեան նշան էր (Ա. Կր 6.7, 8):

Միս հրահանգը կը վերաբերի երախայրիքներուն, որ կը նշանակէ ոչ միայն բերքերուն առաջին արդիւնքը, այլ նաեւ՝ կենդանիներուն առաջին ծնունդները: Իսկ Աստուծոյ ընծայել՝ միայն Աստուծոյ համար ողջակէզ չէր նշանակէր, այլ՝ անոնցմէ բաժին հանել աղքատներուն, որբերուն, այրիներուն եւ քահանաներուն: Այս ձեւով Աստուած կ'ուզէ վարժեցնել Իր ժողովուրդը այն սպասութեան թէ՛ քու անձդ յիշելու կողքին, յիշէ նաեւ ուրիշները:

### **ԽՈՍՏՈՒՄՆԵՐ ԵՒ ՈՒՍՈՒՑՈՒՄՆԵՐ (23:20-33)**

Պատուիրաններու աւարտին անմիջապէս կը յաջորդէ Տիրողը հրեշտակին յիշեցումը, որ պիտի առաջնորդէր զիրենք: Տիրոջ հրեշտակին կապակցութեամբ կարեւոր ճշդում մը կը բերէ հոս: Կ'ըսէ պէտք է ուշադիր ըլլալ անոր բերնէն ելած իւրաքանչիւր խօսքին, որովհետեւ «Իմ անունս անոր վրայ է» -եբրայերէն՝ «մէջն է»-, որ կը նշանակէ թէ ան նոյնինքն Աստուած է. արքայապետելու ձեւ մըն է սեմական լեզուներու մէջ՝ մէկը իր անձին մասին երկրորդ դէմքով խօսիլը: Հետեւաբար, Աստուծոյ անունը անոր մէջն է կը նշանակէ անիկա նոյնինքն Եհովա Տէրն է: Եւ անմիջապէս ետքը կ'ըսէ թէ այդ հրեշտակը ձեզ պիտի առաջնորդէ եւ փանի խոստացեալ երկիրը: Ժողովուրդներու անունները կը յիշէ, եւ կ'ըսէ թէ պիտի վտարէ զանոնք այդ երկրէն, նաեւ կը զգուշացնէ զանոնք այն բոլոր սովորութիւններէն, որոնք այդ ժողովուրդներուն յարուկ կենցաղային եւ մանաւանդ ծիսական սովորութիւններ են, եւ խստօրէն կը զգուշացնէ որ չըլլայ անոնց սովորութիւնները որդեգրեն իրենց կեանքին մէջ, եւ չըլլայ որ անոնք որոգայթ դառնան եւ իրենք Աստուծոյ դէմ մեղանշեն: Ճշմարիտ աստուածաշարժութեան հրահանգ մըն է, որ կու փայ Աստուած: Ով որ Աստուծոյ պաշտամունքին հաւաքարիմ կը մնայ անիկա Աստուծոյ օրհնութիւնը պիտի ունենայ. զանոնք գերծ պիտի թողու բոլոր հիւանդութիւններէն եւ հարուածներէն, որոնք պարուհաս դարձան Եգիպտոսի վրայ: Ըսել կ'ուզէ թէ օրինապահութիւնը կամ ճշմարիտ աստուածաշարժութիւնը իր հետ կը բերէ օրհնութիւն մը, որ մեզ գերծ կը պահէ այն չարիքներէն, որոնք յարուկ են անհնազանդներուն: Եւ կ'ըսէ՝ «Ես ինքս պիտի հարուածեմ» որպէսզի հեռու մնան անոնց սովորութիւններէն: Հոս երբ «ջարդեմ» կ'ըսէ Տէրը, ոչ թէ ամբողջական բնաջնջումն է այդ ժողովուրդներուն, այլ մասնակիօրէն բնաջնջումը անոնց, որովհետեւ կ'ըսէ «մէկ անգամէն պիտի չվտարեմ զանոնք»: